

Ինստիտուտների դերը և դրանց ազդեցությունը ձեռնարկատիրության վրա

ՀՏԴ: 334.06

Թարփոշյան Հակոբ Վ.

Հայաստանի պետական կառավարման սկզբնական ասպիրանտ,
hakobtarposhyan@paara.am

Հանգուցաբառեր՝ Ինստիտուտներ, ձեռնարկատիրություն, տնտեսական աճ, ինստիտուտների սահմանում, ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներ

Роль институтов и их влияние на предпринимательство

Тарпошян Акоб В.

Аспирант кафедры Академии государственного управления Республики Армения (Ереван, РА)
hakobtarposhyan@paara.am

Аннотация: Институты являются ключевой отправной точкой для выявления различий между странами, которые существенно влияют на экономический рост и развитие. Тем не менее, ряд вопросов в этой области все еще требует выявления и решения.

В рамках данного исследования, в первую очередь, была изучена и проанализирована сущность институтов. Мы также сравнили результаты различных литератур о важности, влияние и двусторонние отношения на формальные и неформальные институты, что может служить методологией для дальнейших научных исследований и статистических анализ. Кроме того, представлен аналитический обзор избранных вкладов в изучение институтов, экономического роста и предпринимательства. Последнее может стать новой перспективой для дальнейших исследований в сфере предпринимательства в Армении.

Ключевые слова: Институты, предпринимательство, экономический рост, определение институтов, формальные и неформальные институты.

The role of institutions and its' impact on entrepreneurship

Tarposhyan Hakob V.

Ph.D. Student at the Public Administration Academy of the Republic of Armenia (Yerevan, RA)
hakobtarposhyan@paara.am

Abstract: Institutions are the key starting point for the differences between countries, which significantly affects economic growth and development. However, a number of issues in the field still need to be identified and resolved.

In the framework of this research, first, the the essence of institutes were studied and analyzed. Further, we compared the findings in different strands of the literature on the importance, impact and bidirectional relationship on formal and informal institutions, which can serve as a methodology for further scientific research and statistical analysis. This paper provides also an analytic review of selected contributions to the study of institutions, economic growth and entrepreneurship, which can become a new perspective for further research in the field of entrepreneurship in Armenia.

Key words: Institutes, Entrepreneurship, Economic Growth, Definition of Institutions, Formal and Informal Institutions

Ինստիտուտները Դուգլաս Նորթը սահմանում էր որպես «մարդկանց կողմից մշակված սահմանափակումներ, որոնք կառուցում են տնտեսական, քաղաքական և սոցիալական փոխհարաբերությունները»: Նորթը պնդում էր, որ ինստիտուտները «խաղի կանոններն» են և դրանք խմբավորվում են ձևակարգված (այսուհետ՝ ֆորմալ) և չձևակարգված (այսուհետ՝ ոչ ֆորմալ) ինստիտուտների [26, էջեր 3, 36]: Այս սահմանումը հանդիսանում է առավել ընդունելի դասակարգումը տնտեսագետների շրջանում [3, էջ 492; 6, էջ 3; 34, էջ 4]:

Նորթը սկսում է այն մտքից, որ արտադրության գործոնների կուտակումը միայն միջանկյալ պատճառ է տնտեսական զարգացման համար: Նա առաջ է քաշում աճը խթանող կառուցվածքի

առկայության գաղափարը (օրինակ՝ ընտանիքը, պետությունը, հասարակական կազմակերպությունները և այլն) և նշում, որ մարդկանց ջանքերի, մարդկային և ֆիզիկական կապիտալի, ինչպես նաև նորարարության ու նոր տեխնոլոգիաների մեջ ներդրումների շատ կամ քիչ լինելը պայմանավորված է հենց այս կառուցվածքով, որը բաղկացած է ինստիտուտներից և դրանց կիրառումը ապահովող միջոցներից [26, էջեր 3, 4, 134]:

Շարունակելով միտքը, Նորթ փաստում է, որ մարդկանց կողմից կազմակերպված բոլոր գործունեությունները՝ տնտեսությունից մինչև սպորտ, այդ կառուցվածքի առկայության արդյունք են [27, էջ 48]:


Ավելի հասկանալի լինելու համար բերենք հետևյալ օրինակը. Ճանապարհային երթևեկությունը հնարավոր է լինում արդյունավետ կերպով իրականացնել մի շարք ֆորմալ կանոնների (օրինակ՝ արագությունը չզերազանցելը, կարմիր լուսացույցի դեպքում կանգնելը), ոչ ֆորմալ նորմերի (օրինակ՝ զիջելը, արձագանքի միջոցով շնորհակալություն հայտնելը) և այս կանոնների ու նորմերի պահպանումն ապահովելու համար՝ ճանապարհային ոստիկանների ու հարակից կառույցների աշխատանքի արդյունքում: Այս պարզ օրինակի միջոցով կարելի է հասկանալ ճանապարհային երթևեկության ֆորմալ և ոչ ֆորմալ «խաղի կանոնների»՝ ինստիտուտների կարևորությունը և դրանք առավել հեշտությամբ պատկերացնել տնտեսական միջավայրում:

Տնտեսական հիմնախնդիրները ինստիտուտների միջոցով բացատրող գիտական

ուղղությունը ընդունված է անվանել Նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտություն (New institutional economics (NIE)): Տերմինը առաջին անգամ օգտագործել է աշխարհահռչակ տնտեսագետ Օլիվեր Ուիլյամսոնը [20, էջ 1], ով նորովի ներկայացրեց ինստիտուտների դերը տնտեսագիտության մեջ, ինչի համար նրան շնորհվեց Նոբելյան մրցանակ:

Նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը հանդիսանում է տնտեսագիտական բավականին թարմ ուղղություն, քանի որ այն սկսել է ձևավորվել միայն նախորդ դարի 60-ական թվականներին [22, էջ 19]: Նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության ուսումնասիրության առանցքային խնդիրներին և այդ ուղղությունների կարևոր ներկայացուցիչներին կարելի է ծանոթանալ Գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության ուսումնասիրության առանցքային խնդիրները և այդ ուղղությունների կարևոր ներկայացուցիչները [30, էջ 15]



Պետք է նկատել, որ ավանդական տնտեսագիտությունը նվազագույն դեր է տալիս ինստիտուտներին (ինչպես օրինակ՝ սեփականության իրավունքի ինստիտուտի անհրաժեշտությունը շուկայական տնտեսության գործելու համար) [32, էջ 2]: Դրան հակառակ, Ուիլյամսոնը ինստիտուտներին տվեց առանցքային նշանակություն՝ առաջ քաշելով այսպես կոչված «գործարքի ծախսերի» («cost of transacting») գաղափարը [35, էջ 233]: Ըստ նրա տեսության գործարքի ծախսերը որոշվում են ինստիտուտներից կախված և հանդիսանում են տնտեսական զարգացման բանալին [35, էջ 233]: Ավելին, խորացնելով Ուիլյամսոնի գաղափարը, Էրիկ Սթեմը, հենվելով Հոբսի մտքի վրա¹, հարցականի տակ է դնում

առանց ինստիտուտների արտադրության, բաշխման և սպառման շղթայի գոյություն ունենալը [32, էջ 11]:

Ուսու հայտնի ինստիտուցիոնալ տնտեսագետ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Աուզանը պնդում է, որ ինստիտուտները ունեն որոշումների համակարգման գործառնություն [36, էջ 15]:

Նոբելյան մեկ այլ մրցանակակիր, հայտնի տնտեսագետ Ֆրիդրիխ Հայեկը ինստիտուտների մասին ասում էր, որ դրանք հաճախ ձևավորվում են ոչ թե մարդկանց որևէ խմբի կողմից կանխամտածված գործողությունների², այլ քաղաքական այնպիսի գործընթացների

¹ Հոբսը պնդում էր որ՝ «հասարակությունն առանց ինստիտուտների քառսի մեջ կհայտնվի»

² Օրինակ՝ նա գտնում էր որ ինստիտուտների փոփոխությունը տեղի է ունենում բնական գործընթացների արդյունքում. նա վերջինիս տալիս էր «ինքնարուխ կարգ» («spontaneous order») անվանումը

արդյունքում, որոնք բավարարում են շահագրգիռ կողմերի շահերը: Դրա հետ մեկտեղ նա փաստում էր, որ մարդկանց խմբի կողմից կանխամտածված ինստիտուտների մշակումը նույնպես հնարավորություններ է, նկատի ունենալով, որ ցանկության դեպքում համակարգում կարելի է դիտավորյալ ներմուծել ինստիտուտներ, որոնք նախապես պլանավորված են ինչ-որ մարդկանց կամ կառույցների կողմից:

Արդեն նշեցինք, որ ինստիտուտների ամենատարածված դասակարգումը դրանց խմբավորումն է ֆորմալ (ինչպես օրինակ՝ սահմանադրությունները, օրենքները, իրավունքները և այլն) և ոչ ֆորմալ ինստիտուտների (ինչպես օրինակ՝ մշակույթը, սովորույթները, ավանդույթներ և այլն) [26, էջ 4]: Մի շարք տեսաբաններ հանգել են այն մտքին, որ ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները սերտորեն կապված են միմյանց հետ, ընդ որում այդ կապը արտահայտվում է նաև նրանով, որ ոչ ֆորմալ ինստիտուտների ազդեցությունը կարող է արտահայտվել ոչ միայն ուղղակի այլ նաև ֆորմալ ինստիտուտների միջոցով [31, էջ 217; 26, էջեր 89, 115]:

Ուիլյամսոնը նույնպես այդ կարծիքին էր: Նա պնդում էր, որ ֆորմալ ինստիտուտները փոխվելու համար պահանջվում է շատ ավելի կարճ ժամանակ, քան ոչ ֆորմալ ինստիտուտների համար: Նա նշում է, որ ոչ ֆորմալ ինստիտուտները կարող են խանգարել կամ խթանել ֆորմալ ինստիտուտների փոփոխությունները [35, էջեր 597-599]: Այլ կերպ ասած, արդյունավետ սոցիալական նորմերը, ինչպիսիք են՝ ազնվությունը, քրտնաջան աշխատանքը կամ կոռուպցիան, կարող են նվազեցնել կամ ընդհակառակը ավելացնել գործարքի ծախսերը և այդպիսով արագացնել կամ դանդաղեցնել բարձր արտադրողականությանը համակարգի ստեղծումը [26, էջ 138]:

Այս միտքը կարելի է ներկայացնել պարզագույն օրինակով: Երթևեկության նոր կանոնի, օրինակ՝ ամրագոտին գցելու օրենքը, ինչը, ըստ էության, ֆորմալ ինստիտուտ է, տարբեր ժամանակներում ներդրվել է տարբեր երկրներում, սակայն ակնհայտ է, որ հասարակության կողմից դրա ընդունումը և կիրառումը, արագ կամ դանդաղ, թանկ կամ էժան լինելը, կախված է այնպիսի ոչ ֆորմալ ինստիտուտներից, ինչպիսիք են օրինակ՝ կոռուպցիան, կրթվածության մակարդակը, հավատքը և այլն:

Ինչպես արդեն նշվեց, Ուիլյամսոնը նույնպես համոզված էր, որ ոչ ֆորմալ ինստիտուտների անուղղակի ազդեցությունը համեմատաբար ավելի մեծ է, քան ֆորմալ ինստիտուտների դեպքում և այդ ազդեցությունն արտահայտվում է հենց ֆորմալ ինստիտուտների

միջոցով: Հիմնվելով Նորթի տեսության վրա՝ Ուիլյամսոնը առաջարկեց հայեցակարգային մի մոդել, որում ինստիտուտները դասակարգվում են չորս մակարդակի հիերարխիայի մեջ և որտեղ յուրաքանչյուր մակարդակ սահմանափակումներ է դնում ներքևում գտնվող ինստիտուտների համար (գծապատկեր 2) [35, էջ 597]:

Իր մոդելում Ուիլյամսոնը ոչ ֆորմալ ինստիտուտները դասակարգում է ներառվածություն՝ «Embeddedness» բառով, և պնդում է, որ դրանց փոփոխության համար անհրաժեշտ է հարյուրից մինչև հազար տարի, քանի որ դրանք հասարակության մեջ ամենախորը արմատավորված կարգերն են:

Երկրորդ մակարդակում, այսպես կոչված, «խաղի ֆորմալ կանոններն են», որին հաջորդում են անհատների միջև փոխհարաբերությունները սահմանող «կառավարումը»: Նշված երեքը ազդում են վերջին՝ չորրորդ մակարդակի վրա, այն է՝ ռեսուրսների բաշխումը, այդ թվում՝ մարդկանց մասնագիտական ընտրությունը [14, էջ 566; 35, էջեր 597-598]:

Իսկապես, ոչ ֆորմալ ինստիտուտները կարևոր են զարգացման համար, միևնույն ժամանակ, պետք է հիշել, որ դրանց ազդեցությունը կախված է ինստիտուտներից, այդ թվում՝ միջավայրում ֆորմալ ինստիտուտների դերից և կարևորությունից [13, էջեր 1, 16, 17]: Արդյունավետ ինստիտուտների համակարգի և համապատասխան ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների կառուցումը յուրջ մարտահրավեր է, քանի որ կապված է գործարքային խոշոր ծախսերի հետ և պահանջում է ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների միջև փոխհարաբերությունների մանրակրկիտ ուսումնասիրություն [25, էջ 319]: Այդ փոխհարաբերություններից բխող մի շարք հետևանքներից կան այնպիսիները, որոնք բարդացնում են արդյունավետ ինստիտուտների ստեղծումը, ինչպես օրինակ՝ հասարակության համար կայունության զգացումը, պատմական պայմանների ազդեցությունը, նոր ֆորմալ և հին ոչ ֆորմալ ինստիտուտների միջև բախումը [8, էջ 918]:

Այսպիսով, եթե հակիրճ ամփոփենք մինչ այս տնտեսագետների կողմից ինստիտուտների մասին կատարված հետազոտությունները, կարելի է ասել, որ ինստիտուտները մարդկանց կողմից չկանխամտածված կամ դիտավորյալ կերպով մշակված սահմանափակումներն են, որոնք կառուցում են քաղաքական, տնտեսական և սոցիալական փոխհարաբերությունները, այդպիսով իսկ ստեղծելով գործարքի որոշակի ծախսեր, որոնք էլ կարող են հեշտացնել տնտեսական զարգացումը կամ ընդհակառակը դանդաղեցնել այն [25, էջ 156]:

Գծապատկեր 2. Նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության հայեցակարգային մոդելը ըստ Ուլյամսոնի [35, էջ 597]

Մակարդակ	Հաճախականություն (տարի)	Նպատակ	
L1. սոցիալական տեսություն	Embeddedness .Ոչ ֆորմալ ինստիտուտներ, ավանդույթներ, նորմեր, հավատ	100-1000	Հաճախ ինքնաբերական
L2. սեփականության իրավունքի տնտեսություն	Ինստիտուցիոնալ միջավայր. Խաղի ֆորմալ կանոններ. օր. ¹ սեփականության իրավունք	10-100	ինստիտուցիոնալ միջավայրի ճիշտ ձևավորելը
L3. Տրանզակցիոն ծախսերի Տնտեսագիտություն	Կառավարում. օր. ¹ պայմանագրեր	1-10	Կառավարման կառուցվածքի ճիշտ ձևավորելը
L4 Ոչ ավանդական Տնտեսագիտություն	Ռեսուրսների տրամադրում և զբաղվածություն	Ընթացիկ	Սահմանային միջոցների ճիշտ օգտագործելը

Երկրների ինստիտուտների քանակական գնահատումներ իրականացվում են մի քանի հետազոտական կառույցների կողմից: Դրանցից առավել հայտնի և որակյալ կառույցներն են՝ «Heritage Foundation» [39], «The Freedom House» [37]-ը, «The world economic forum»-ի Համաշխարհային մրցունակության զեկույցը [40]: Հետազոտության քանակական վերլուծության համար մեծ դեր է ունեցել նաև Համաշխարհային բանկի կողմից մշակված պետական կառավարման արդյունավետությունը գնահատող համաթիվը (GRICS) [38]: Դրանցից յուրանայուրը, որպես կանոն, ամեն

տարի թարմացվում է՝ սահմանված մեթոդության հիման վրա, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում գնահատել տարվա ընթացքում երկրի ինստիտուտների որակի հարաբերական և բացարձակ փոփոխությունը:

Աղյուսակ 1-ում ըստ գնահատող կառույցների ներկայացված են երկրների ինստիտուտների գնահատման ցուցանիշներ, որոնք թույլ են տվել սույն աշխատանքի շրջանակներում իրականացված քանակական վերլուծությունների միջոցով ստուգել հետազոտության արդյունքում առաջ քաշված հիպոթեզները:

Աղյուսակ 1. Ինստիտուտների գնահատման ցուցանիշներ ըստ գնահատող կառույցների

Heritage Foundation [39]	The Freedom House [37]	WEF [38]	World bank [40]
1.Օրենքի գերակայություն (ներառում է՝ 1.1.Սեփականության իրավունքներ, 1.2.Արդարադատության համակարգի արդյունավետություն, 1.3.Կառավարության ներգրավվածություն), 2.Կարգավորման արդյունավետություն (ներառում է՝ 2.1.Գործարար միջավայրի անկախություն, 2.2.Նշխատաշուկայի անկախություն, 2.3.Դրամական հատվածի անկախություն), 3.Կառավարության չափ (ներառում է՝ 3.1.Հարկային բեռ, 3.2.Կառավարության ծախսեր, 3.3.Հարկային միջավայրի առողջություն), 4.Բաց շուկաներ (ներառում է՝ 4.1.Առևտրի ազատություն, 4.2.Ներդրումների ազատություն, Ֆինանսական ազատություն)	1.Քաղաքական իրավունքներ (ներառում է՝ 1.2.Ընտրական գործընթաց, 1.3.Քաղաքական բազմակրթություն, 1.4.Կառավարության գործառնություն) 2.Քաղաքացիական ազատություն (ներառում է՝ 2.1.Արտահայտվելու 2.2.Հավատքի ազատություն, 2.3.Կազմակերպությունների ազատություն, 2.4.Օրենքի գերակայություն, 2.5.Անձնական ազատության իրավունքը)	1.Անվտանգություն, 2.Առուցումներ և հաշվեկշիռ, 3.Սոցիալական կապիտալ, 4.Հանրային ոլորտի ներկայացում, 5.Թափանցիկություն, 6.Սեփականության իրավունքներ, 7.Կորպորատիվ կառավարում, 8.Կառավարության ապագա կողմնորոշում	1.Իշխանությունների հաշվետվողականություն և բնակչության ծախսի իրավունք, 2.Քաղաքական կայունություն և բռնության բացակայություն, 3.Կառավարության արդյունավետություն, 4. Կարգավորման որակ, 5. Իրավունքի գերակայություն, 6.կրոնապաշտի վերահսկողություն

Ինստիտուտները և տնտեսական աճը

Նորթը պնդում էր, որ ինստիտուտները հանդիսանում են զարգացման առաջնային գրավակները և շատ երկրների թույլ արդյունավետության հիմնական պատճառը այդ զարգացումը խթանող ինստիտուտների համակարգի բացակայությունն է: Նա նշում է, որ «...*Երրորդ Աշխարհի երկրները աղքատ են, քանի որ ինստիտուցիոնալ սահմանափակումները ստեղծում են քաղաքական և տնտեսական գործընթացներ, որոնք չեն նպաստում բարձր արտադրողականություն ունեցող գործունեության զարգացմանը...*» [26, էջ 110]:

Ինստիտուցիոնալ տնտեսագիտության դերի բարձրացման համար մեծ դեր է ունեցել նաև ինստիտուցիոնալ տնտեսագիտության միջոցով երկրների զարգացման տարբեր մակարդակներ ունենալու երևույթի բացատրելը: Մասնավորապես, Տ. Աճեմոլլուն, Ջ. Ռոբինսոնը և Ս. Չոնսոնը հիմնավոր կերպով մերժեցին դասական տնտեսագիտության կողմից առաջ քաշված այն վարկածը, ըստ որի՝ երկրների միջև զարգացման տարբերության պատճառը հանդիսանում են այնպիսի գործոնները, ինչպես օրինակ՝ նորարարությունը, կրթության մակարդակը, կապիտալի կուտակումը և այլն: Դրա փոխարեն հեղինակները ներկայացնում են երեք գործոն, որոնք ազդում են տնտեսական զարգացման վրա, դրանք են՝ տնտեսական ինստիտուտները, աշխարհագրական դիրքը և մշակույթը [2, էջ 388] (ոչ ֆորմալ ինստիտուտ): Օրինակներով և քանակական վերլուծությունների միջոցով այս տնտեսագետները հանգել են այն մտքին, որ թվարկված գործոնների և երկրների մեկնարկային պայմանների միջոցով կարելի է բացատրել տնտեսական աճը:

Տնտեսական աճի վրա ինստիտուտների ուղղակի և անուղղակի ազդեցության մասին հետազոտություններ իրականացրել են նաև Ու. Բաումոյը, Դ. Ռոդրիկը և հանգել են այն մտքին, որ ինստիտուտները ազդում են տնտեսական աճի վրա էնդոգեն գործոնների միջոցով, ինչպիսիք են՝ ձեռնարկատիրությունը և արդյունաբերական զարգացումը [33, էջ 18]:

Այսպես, իրականացված հետազոտությունների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ ինստիտուտները առանցքային նշանակություն ունեն տնտեսական առաջընթացի համար: Մի շարք հեղինակավոր տնտեսագետների կողմից այս փոխազդեցության մեջ ձեռնարկատիրության դերի կարևորումը ապացուցում է ձեռնարկատիրության և ինստիտուտների փոխազդեցության ուսումնասիրության արդիականությունն ու անհրաժեշտությունը [8, էջ 918]:

Ինստիտուտները և ձեռնարկատիրությունը

Կատարված հետազոտությունները փաստում են, որ ինստիտուտները ազդում է ձեռնարկատիրական գործունեության վրա [3, էջեր 477-478; 4, էջ 3; 7, էջ 20; 8, էջ 918; 21; 26, էջ 73], այսինքն՝ ձեռնարկատիրության կողմից տնտեսական աճին և զարգացմանը նպաստումը մեծապես կախված է տնտեսական միջավայրից և տնտեսության զարգացման մակարդակից [16, էջ 57]: Ինստիտուտների արդյունավետ գործելու պարագայում ավելանում է արդյունավետ ձեռնարկատիրության մակարդակը, ինչը նպաստում է տնտեսական աճին և զարգացմանը [16, էջ 51]: Ավելի կոնկրետ, ինչպես արդեն նշվեց, տնտեսության մեջ ինստիտուտները ստեղծում են սահմանափակող և խթանող գործոններ, որոնք խրախուսում են ձեռներեցներին՝ ցածր արտադրողականությունից անցնել բարձր արտադրողական գործունեության կամ հակառակը [4, էջ 3] և դրա արդյունքում, բարելավում կամ նվազեցնում են հասարակության բարեկեցությունը [8, էջ 918] [26, էջ 100]:

Ձեռնարկատիրական տաղանդի օգտագործման և դրանից ստացված արդյունքի վրա ինստիտուտների որակի ազդեցությունը կարևորած տնտեսագետներից մեկը Ուիլյամ Բաումոյն է: Նա ընդգծում էր ձեռնարկատիրության վրա ինստիտուտների դերը և պնդում, որ արդյունավետ ինստիտուտների առավել բարենպաստ համակարգի առկայության պարագայում ավելի հավանական է անհատի՝ ձեռնարկատիրական ռիսկ ստանձնելու ցանկությունը [8, էջ 898]: Այլ կերպ ասած, եթե ինստիտուտները այնպիսին են, որ անհատի համար ավելի ձեռնտու է ջանքեր գործադրել դրանք շրջանցելու, այլ ոչ թե դրանց միջոցով արտադրողականությունը բարելավելու վրա, ապա ձեռներեցը կշրջանցի դրանք:

Բաումոյը նշում էր, որ դրա արդյունքում է, որ որակյալ ինստիտուտներ ունեցող երկրները (կամ տարածաշրջանները) բարձր արտադրողականություն ունեցող ձեռնարկությունների մակարդակն ավելին է, քան ցածր որակով ինստիտուտներ ունեցող երկրներում (կամ տարածաշրջաններում), իսկ պակաս արտադրողական (կամ վնասող) ձեռնարկությունների մակարդակը՝ ցածր: Նրա առաջնային ենթադրությունն այն է, որ ձեռնարկատիրական տաղանդները հավասարապես բաշխված են աշխարհով մեկ և այդ տաղանդների՝ տնտեսական աճին շատ կամ քիչ նպաստելը կախված է ինստիտուտներից [8, էջեր 898-899]: Մեր կարծիքով այս ենթադրությունը մասամբ համապատասխանում է իրականությանը, սակայն կան գործոններ, որոնք այնուամենայնիվ նպաս-

տում են տաղանդի անհավասար բաշխմանը (օրինակ՝ ժառանգականության գործոնը):

Շատ երկրներ ձեռնարկատիրության իրանման քաղաքականությունը ընտրել են որպես տնտեսական զարգացման գործիք: Չնայած դրան, ոչ բոլոր երկրների մոտ է հաջողվել ստանալ պլանավորված դրական «դոմինոյի էֆեկտ»: Պատճառն այն է, որ ինստիտուտների և ձեռնարկատիրության միջև փոխհարաբերությունը շատ ավելի բարդ է, քան գծային կապը, ինչը փաստում են կատարված ուսումնասիրությունների արդյունքները [12, էջ 75]: Ընդ որում, երկրի ինստիտուտների միջավայրից կախված է ոչ միայն ձեռնարկատիրության մակարդակը, այլ նաև որակը [12, էջ 52]: Այլ կերպ ասած, ինստիտուտների կողմից տնտեսական աճի վրա ազդեցությունը արտահայտվում է ոչ միայն ձեռնարկատիրական մակարդակի, այլ նաև որակի, այդ թվում՝ նորարարական ձեռնարկատիրության միջոցով:

Ձեռնարկատիրական որակի վրա ազդեցությունը ապացուցվել է նաև մաթեմատիկական ռեգրեսիոն մոդելների միջոցով [12, էջ 51]: Բոլորովին վերջերս կատարված հետազոտությունը հաստատում է ինստիտուտների որակի նշանակալի դրական ազդեցությունները բարձր արտադրողական ձեռնարկատիրական գործունեության և բացասական ազդեցությունը՝ ոչ արտադրողական ձեռնարկատիրության մակարդակի վրա [5, էջ 17]: Հարկ է նշել, որ վերջն միտքը՝ ցածր արտադրողականության մակարդակ ունեցող ձեռնարկությունների կշռի անկումը, չի խոսում միայն դրանց շուկայից դուրս գալու, այլ նաև այդ ձեռնարկությունների «հարկադրված» արտադրողական դառնալու մասին:

Հատկանշական է, որ ոչ միայն ինստիտուտներն են ազդում ձեռնարկատիրության վրա, այն նաև հակառակը [9, էջեր 213-214; 10, էջ 66; 18, էջ 25; 29, էջ 178]: Դա բացատրվում է նրանով, որ ձեռներեցների՝ որպես տնտեսության առավել ակտիվ գործակալների, գործունեությունը հաճախ բերում է միջավայրի փոփոխության, քանի որ դրանք ստեղծում են «... նոր կազմակերպչական մոդելներ և քաղաքականություններ, որոնք փոխում են գործարար ուղղությունը և հոսքը» [19, էջ 180], ինչը իհարկե իր հերթին հանգեցնում է ինստիտուտների փոփոխությանը:

Այժմ փորձենք հասկանալ թե, որոնք են այն ինստիտուտները, որոնք առավել մեծ ազդեցություն ունեն ձեռնարկատիրական մակարդակի և որակի վրա:

Որոշ տեսաբաններ պնդում են, որ ձեռնարկատիրության վրա ոչ ֆորմալ ինստիտուտներն ավելի մեծ ազդեցություն ունեն, քան ֆորմալ ինստիտուտները: Այս միտքը կարելի է հանդիպել ոլորտում մեծ ներդրում ունեցած

Urbano, Aparicio և Audretsch մոտ [33, էջ 17]: Բացի դրանից՝ Կաստանոյի կողմից 2012–2017թթ. տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձեռնարկատիրական հակումը ավելի բարձր է այն երկրներում, որտեղ սոցիալական ինստիտուտներն առավել զարգացած են [11, էջ 1597]:

Մի շարք այլ տնտեսագետների կողմից կատարված հետազոտությունների արդյունքների համաձայն՝ թե՛ ֆորմալ, և թե՛ ոչ ֆորմալ ինստիտուտներն ունեն ազդեցություն ձեռնարկատիրության վրա, սակայն ֆորմալ ինստիտուտների (օրինակ՝ սեփականության իրավունքը, հարկային օրենքները [23, էջ 8; 28, էջ 20], ֆիզիկական ենթակառուցվածքները, գիտահետազոտական մշակումների փոխանցումը [22, էջ 71], և այլն) ազդեցությունն ավելի մեծ է: Նմանատիպ արդյունքների հանգամ հետազոտություններ հեղինակել են Հենրիկսոնը [17, էջ 58], Պերիս-Օրտիգան [23, էջ 8] և այլոք [22, էջ 71; 24, էջ 20]:

Այս երկու հակասական կարծիքներից բացի, առկա է նաև երրորդ տեսակետները, ըստ որի, ֆորմալ ինստիտուտների ազդեցությունը ձեռնարկատիրության վրա կախված է ոչ ֆորմալ ինստիտուտներից, օրինակ՝ կոռուպցիայի ցածր մակարդակի դեպքում [6, էջ 14; 16, էջ 171]: Հիշեցնենք, որ նմանատիպ մոտեցում էր առաջարկում նաև Ուլիամսոնը իր մոդելում (Գծապատկեր 2):

Գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսագիտական այս նոր ուղղության մեջ, բացի վերոնշյալ հարցերից, դեռ շատ հետաքրքիր և առանցքային խնդիրներ մնում են չբացահայտված [15, էջ 1]: Մասնավորապես, Ուրբանոյի կողմից 1992-2016 թվականներին այս ոլորտում կատարված հետազոտությունների խորքային ուսումնասիրության արդյունքում հեղինակը հանգել է այն մտքին, որ, ըստ էության, ձեռնարկատիրությունը կարող է դիտարկվել որպես ինստիտուտների և տնտեսական աճի միջև բացակայող օղակը: Այս միտքը տարբեր կերպ կարելի է հանդիպել այլ տնտեսագետների մոտ ևս, բայց Ուրբանոն առանձնանում է իր մշակած մոդելով, որը մանրակրկիտ արտահայտում է այս կապի գաղափարը (Գծապատկեր 3):

Հեղինակի հիմնական եզրակացություններից մեկն այն է, որ կա ձեռնարկատիրության վրա ինստիտուտների ազդեցությունը և տնտեսության վրա այդ կապի ազդեցությունը գնահատելու կարիք [33, էջ 18]:

Այսպիսով, տնտեսական առաջընթացի և համակարգում ցանկացած գործոնի, այդ թվում՝ ձեռնարկատիրության միջև փոխհարաբերության առկայությունը և դրա արդյունավետ լինելը մեծապես կախված է համակարգում


առկա ինստիտուտներից: Վերջիններս մարդկանց կողմից չկանխամտածված կամ դիտավորյալ կերպով մշակված սահմանափակումներն են կամ, ինչպես պնդում էր Նորթը՝ «խաղի կանոններն» են, որոնք ստեղծում են գործարքի որոշակի ծախսեր, որոնք իրենց հերթին կարող են հեշտացնել տնտեսական զարգացումը կամ ընդհակառակը՝ դանդաղեցնել այն:

Բարձր արտադրողականություն ունեցող ձեռնարկությունների կշիռը ուղիղ համեմատական է երկրներում բարենպաստ ինստիտուտներին, ընդ որում՝ ինչպես ֆորմալ, այնպես

էլ ոչ ֆորմալ ինստիտուտները յուրովի ազդում են ձեռնարկատիրության թե՛ մակարդակի, և թե՛ որակի վրա, իսկ ձեռնարկատիրությունն իր հերթին ազդում է ինստիտուտների ձևավորման, զարգացման կամ թուլացման վրա:

Ինստիտուցիոնալ տնտեսագիտության մի շարք հետաքրքիր հարցեր դեռևս մնում են անպատասխան: Դրանց շարքին է դասվում ձեռնարկությունների վրա ինստիտուտների ազդեցությունը, որի մասին են վկայում նաև այս ոլորտում կատարված հետազոտությունները:

Գծապատկեր 3. Ինստիտուտների, ձեռնարկատիրության և տնտեսական զարգացման միջև կապը [33, էջ 18]



Օգտագործված գրականության ցանկ

- Acemoglu D., Gallego F. A., Robinson J. A., “Institutions, Human Capital, and Development” , 2014, հասանելի է՝ <https://economics.mit.edu/files/9940>
- ACEMOGLU D., JOHNSON S., ROBINSON J. A., “Institutions as a fundamental cause of long-run growth”, հասանելի է՝ <https://economics.mit.edu/files/4469>
- Acs, Z.J., Autio, E. and Szerb, L., “National systems of entrepreneurship: measurement issues and policy implications”, Research Policy, 43(3), 2014, հասանելի է՝ <https://sci-hub.se/https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0048733313001613>
- Aidis R., “Do institutions matter for entrepreneurial development?” 2017, հասանելի է՝ <https://wol.iza.org/articles/do-institutions-matter-for-entrepreneurial-development>
- Amorós J. E., “The Impact of Institutions on Entrepreneurship in Developing Countries”, 2016, հասանելի է՝ <https://clck.ru/XCVHa>
- Aparicio, S., Urbano, D. and Audretsch, D., “Institutional factors, opportunity entrepreneurship and economic growth: Panel data evidence”, Technological Forecasting and Social Change, 2016, հասանելի է՝ <https://clck.ru/XCVXe>
- Autio, E.; Fu, K. Economic and political institutions and entry into formal and informal entrepreneurship , 2014, հասանելի է՝ <https://clck.ru/XCVKL>
- Baumol W. J., “Entrepreneurship: Productive, Unproductive, and Destructive”, Journal of Political Economy, Vol. 98, No. 5, Part 1, 1990, հասանելի է՝ <https://www.jstor.org/stable/2937617>
- Belitski, M., Chowdhury F., Desai S., “Taxes, corruption, and entry”, Small Business Economics, 47(1), 2016, հասանելի է՝ <https://clck.ru/XCVXC>
- Björnskov, C., Foss N., “How strategic entrepreneurship and the institutional context drive economic growth”, Strategic Entrepreneurship Journal, 7(1), 2013, հասանելի է՝ <https://sci-hub.se/https://onlinelibrary.wiley.com/doi/epdf/10.1002/sej.1148>
- Castaño M.S., Méndez M.T., Galindo M.Á., “The effect of social, cultural, and economic factors on entrepreneurship”, Journal of Business Research, Vol. 68 No. 7, 2015, 1496-1500
- Chowdhury F., Audretsch D. B., Belitski M., “Institutions and Entrepreneurship Quality” 2018, հասանելի է՝ <https://journals.sagepub.com/doi/full/10.1177/1042258718780431>
- De Soysa I., Jütting J., “Informal Institutions and Development: How they matter and what makes them change”, 2007, հասանելի է՝ <https://clck.ru/XCVVW>
- Estrin, S., Korosteleva, J. and Mickiewicz, T., “Which institutions encourage entrepreneurial growth aspirations?”, Journal of Business Venturing, 28(4), 2013,

15. Elert N., Henrekson M., “Entrepreneurship and Institutions: A Bidirectional Relationship”, 2017
16. Ghura H., “The interaction effect of formal and informal institutions on the development of entrepreneurial activity”, Brunel University London 2019
17. Henrekson M., Johansson D., “Competencies and Institutions Fostering High-growth Firms”, 2008, հասանելի է՝ <https://clck.ru/XCVUq>
18. Henrekson M., Sanandaji T., “The Interaction of Entrepreneurship and Institutions”, 2011, հասանելի է՝ <https://clck.ru/XCVLT>
19. Hwang H., Powell, W. W., “Institutions and entrepreneurship”, New York, NY: Springer, հասանելի է՝ <https://clck.ru/XCVUM>
20. Kherallah M., Kirsten J., “The new institutional economics: applications for agricultural policy research in developing countries”, 2001
21. Lajqi, S., Krasniqi B. , “Entrepreneurial growth aspirations in challenging environment: The role of institutional quality, human and social capital”, 2017, հասանելի է՝ <https://scihub.se/https://onlinelibrary.wiley.com/doi/epdf/10.1002/jsc.2139>
22. LI S. “Institutional environment and total entrepreneurial activity: the comparison on nations”, 2017
23. Marta Peris-Ortiza,, João J.M. Ferreirab, Cristina I. Fernandes “Do Total Early-stage Entrepreneurial Activities (TEAs) foster innovative practices in OECD countries?” 2017, հասանելի է՝ <https://clck.ru/XCVPQ>
24. Natalia O., “The role of informal institutions on entrepreneurs’ innovative behaviour”, 2017
25. Naudé W., “Entrepreneurship and economic development”, Palgrave Macmillan, London 2011, հասանելի է՝ <https://clck.ru/XCVNM>
26. North D., “Institutions, institutional change and economic performance”, 1990, հասանելի է՝ https://jonnyphillips.github.io/FLS6415/Class_2/No rth%201990.pdf
27. North, D.C., “Understanding the Process of Institutional Change”, Princeton University Press, Princeton, NJ., 2005,
28. Ostapenko N., “The role of informal institutions on entrepreneurs’ innovative behaviour”, 2017
29. Przeworski A., “The last instance: Are institutions the primary cause of economic development?”, European Journal of Sociology, 45(2), 2004,
30. Sheaff R. “The New Institutional Economics”, 2014
31. Smallbone, D., & Welter, F., “Entrepreneurship and institutional change in transition economies, The Commonwealth of Independent States, Central and Eastern Europe and China compared”, Entrepreneurship & Regional Development, 24(3–4), 2012, հասանելի է՝ <https://scihub.se/https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/08985626.2012.670914>
32. Stam E., Nooteboom B., “Entrepreneurship, innovation and institutions”, 2011 էջ 11, հասանելի է՝ <https://clck.ru/XCVQH>
33. Urbano, D. and Aparicio, S. and Audretsch, D. (2019) 'Twenty-five years of research on institutions, entrepreneurship, and economic growth : what has been learned?', Small business economics., 53 (1).
34. Williamson O., “The mechanisms of governance”, Oxford university press, New York, 1996
35. Williamson O., “The New Institutional Economics Take Stock Looking”, 2015, <https://clck.ru/XCVQs>
36. Аузан А., «Институциональная экономика», 2014
37. <https://freedomhouse.org/>
38. <https://info.worldbank.org/governance/wgi/Home/Reports>
39. <https://www.heritage.org/index/explore>
40. <https://www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2020>

*Сдана/Հանձնվել է՝ 02.09.2021
 Рецензирована/Գրախոսվել է՝ 23.09.2021
 Принята/Ընդունվել է՝ 30.09.2021*